

ՅՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ե.

Մ ա ն կ ա կ ա ն ն ր զ ք ր .

* * *

Այբ, Ժէ, ճէ, ոա,
Ճաշի պոռտուկ կերայ,
Եւս մարէ, շուտ էրէ,
Ես անօթնէ մեռայ.

* * *

Այբ ու բեն,
Տախտակ տփեմ,
Բանի դայ փախնիմ,
Հացի դայ պուպղիմ.

* * *

Համբարձի՛
Ջէշ բարձի,
Գետն ընցի՛

* * *

Հալը մեր որ երկինք՝ վկայ,
Կերայ թթու՝ փքայ,
Ընկայ ջուր՝ սրկայ, ¹⁾
Ելայ դուս՝ լկայ ²⁾.

* * *

Ընթերցուած Յոբայ,
Երկու մարդ եկան Կոփայ,
Ամէկու ձեռք մէկ մէկ ուրախ ³⁾
Վին որ զարկէն, կրտէն Լուսայ ⁴⁾.

* * *

Ընթերցուած Եռակաց,
Քասէմ թթու երկու հաց,
Երեք մարդ եկան Մոկաց,
Բերան ուրանց ⁵⁾ մնաց բաց.

* * *

Ամէկ ուր տուն,
Լակակ ուր բուն,
Խաչ գաւազան
Իմ քեռու տուն.

* * *

Առջին ⁶⁾, քօռ շուշ ⁷⁾
Միջին, չամիլի խէլին ⁸⁾,
Յետին, մտնայ գետին.

* * *

Երանք, արանք ⁹⁾,
Վեր կամն է պարսպ,
Կաման տէր մեռի,
Ոտքերն էր կեռի.

* * *

Անիծեմ, անիծուիս,
Ոտքէ գլուխ պղծակիս ¹⁰⁾
Ելնաս հուէն, ¹¹⁾
Պատիս Լուէն, ¹²⁾

¹⁾ Ընկղմիլ, ²⁾ կակղնալ, հայիլ. ³⁾ մեծ ձեռնափայտ. ⁴⁾ զղջալ, փոշմանել.
⁵⁾ խրեանց. ⁶⁾ Մանրալաճար. ⁷⁾ խէլին

— Ժօտ են, կշտին: ⁸⁾ Այրուելուց ուռել, բղբնիլ. ⁹⁾ տճ. օդ. ¹⁰⁾ տճ.— տապակ:
¹¹⁾ ¹²⁾ Կամը քշելու ժամանակ կեր- գուեն:

Իսկի չ'պրծնաս
Գլխուդ ցաւէն:

* *

Կտօ, Կտօ, մատանայ,
Ոտնէ զլուխ սատանայ,
Կտօն կանի վրը փլին
Փրթաւ ընկաւ մըջ տլին ¹⁾:

* *

Կարկաջա ²⁾
Կարինաջա,
Որ չիտայ գիմ կարկաջէն
Կերթամ ըսիմ Պօլիբիցուն՝
Կիգայ . . . ձեր ձձում:

* *

Ջնջլիկ, բա զնջլիկ,
Թուր ու Բէւէ ու Կուլի ³⁾,
Աւ էդէ, Կու ճըտէ,
Կուզ մարգարէն . . . լստէ:

* *

Տխտողիկ, տխտմարողիկ,
Ջուռնաթխիկ, Թուխ մանուկիկ,
Եփէ գաթա ու կուլունճա ⁴⁾,
Եղն ի վրէն ու պճպճայ,
Հազնի իդա,
Կապէ իդա,
Խմէ իդա,
Ելնա ինա.
—Վի տուն իջնայ,
—Իօզալի տուն.

Էս Գօզալ,
Էս Մուրատ,
Էս Դիլպար,
Էս Բաղդասար,
Էս Բաբրօն,
Էս Գաբրօն,

¹⁾ տիլ—տիղմ. ²⁾ վոմնան, վահանակ,
տճ. գալգան.—³⁾ կոռն, բաղարջ. ⁴⁾ Լե-
րաբընցում, դալմադալ:

⁵⁾ Ծաղկազարդին հաւկիթ ժողովե-
լով կերգեն:

Էս կատուն,
Էս մուկիկ:

* *

Ալլա ¹⁾ Երկուշաբթի,
Աշխար ընցում Երեքշաբթի,
Ջուր պղտորաւ Չորեքշաբթի,
Խմոր էրի Հինգշաբթի,
Լուացք էրի Ուրբաթ օր,
Բաղնիս գացի Չարաթ օր.
Քաշի, գիլրակին ձն է բանի, որ ես
բանիմ:

* *

Ամառ, —Տիւր,
Ձմեռ, Բէ Էր,
Աշուն ու շուն՝
Գարուն ու նշաշուն:

* *

Դրազելի տաք երկիրներէն վե-
րադառնալու ժամանակ՝
Լակկոյ, հաջի բէկոյ,
Յնւտէն կիգաս:
—Սե սարերուց,
Ի՞նչ իս բերի,
—Թուղթ ¹⁾ մի սապոն,
Վիլ կը տանիս,
—Հաջու մամուն,
Լուայ լաչին,
Թալէ գլխուն,
Ելնայ գարուն:

* *

Ճիւ ու ճիւ ու ճնճղիկ,
Թուա զնաց առուի՝ եզրիկ,
Կերաւ կտիկ, խմեց ջրիկ,
Թուա մտաւ Մկրտ ճոցիկ:

* *

Ճիւ ու ճիւ ագռաւու ճիւ,
Թուա զնաց չմրուսաղէմ,
Բուրդ եբեր՝

¹⁾ ¹⁾/₈ հօգգա:

Բամբակ չեբեր,
Զալ եբեր՝
Զալվար չեբեր,
Ճնճղիկ՝ թը՛ռաւ գնաց:

* *

Կարմիր երես բոլոր աւելի,
Դէ՛ք 1) գլուխ ու լէն ճակատ,
Բաժ ու քա՛ն 2) չինարի ծառ,
Ոչ լաւ ողիկ 3) ու ոչ չառ,
Կարմիր թշներ, հո, մող աչքեր,
Դե՛ղ 4) երես, թուլ թուլ ընքներ,
Փահա՛ւ 5) ձեռքեր ճանկ ու ճեր 6),
Թոթո՛շ, փոփո՛շ 7) հաստիկ ճռներ,
Իդ կոնճուկ 8) ոլոր ծամեր,
Այն մընի 9) արծթէ թել 10):

* *

(Երեխայք մէկմէկու ուղղելով կըսեն).

Իմ մամ կերի խառնել,
Զիւ է բերի ոսկե՛ծել,
Քու մամ կերի ձուածել,
Քրդի բերի հո ընճել,
Իմ կերի զարնցան,
Զիւ է բերի ի հնճան,
Քու մամ կերի թթու թան,
Քրդի բերի վթվթան 1):

* *

Քաջալ դացեր է սնձի՝ 2)
Վախենամ կօտ կոնճի 1),
Քաջալ դացեր է սոխի՝
Վախենամ գլուխ սողիսի,
Քաջալ դացեր է տանձի՝

Քաջու լեզուն պապանձի,
Քաջալ դացի շորի՝
Քաջու գլուխ ողորի 3),
Քաջալ դացի չորթնի,
Քաջու գլուխ որդնի,
Քաջալ դացեր է բողի՝
Քաջու գլուխ պղղի 4),
Քաջալ դացի երնջի՝
Քաջու գլուխ պղոճի 5),
Քաջալ դացեր է խոտի,
Քաջու գլուխն էր հոտի,
Քաջալ դացեր է կորդեր,
Քաջու գլուխ որդներ,
Քաջալ դացեր է քէ՛ն՝
Արջեր թափած թամաշէն,
Քաջալ դացեր է ա՛ւտ՝
Գիւան ուտին ա՛ւտ՝
Քաջալ քաղեր է օղին,
Քաջալն խոտ գրողին,
Քաջալ քաղեր է վարոց,
Քաջու գլուխ չոմէն խոց,
Քաջալ դացեր է ջաղաց,
Քաջու բերան մանցի բաց,
Քաջալի ձեռք քա՛նք 6)
Մեր քաջիկներ անհողին,
Քաջալ կաններ վըր դարին՝
Զե՛ք զարկեր էր վըր ա՛ւն:

Բ.

Զանազան երգեր, գովք, պարեր
եւայլն.

Ի ու լ ա ն.

Գութան, գութան

Աստուածաբան,
Եւալ ընկաւ հրտ առախան,
Հրտ ակոսին,

1) Մեծ գլուխ. 2) հասակ. 3) քարակիկ. 4) կարմիր. 5) փափուկ, գէր. 6) ճիւղաւոր. 7) հաստիկ. 8) գուռ. 9) նմանել. 10) Մօր մը գովասանքը իւր օրդուէն:

*) Մօր մը գովասանքը իւր օրդուէն:
1) Արագաշարժ:

**) Քաջալներու տնազ անելու համար:
1) Չորնալ, կուչ գալ, առհասարակ մազերու և ցորենահասկի համար.

2) Քաջալնալ, գլխի կաշին թող տալ.

3) Ջուր կտրիկ, բշտիկ. 4) Նոյն.

5) Գործիք, հնճած ցորենի հաւաքելու խուրձ կապած ժամանակ.

Հրտ արոսին,
 Ձէկն է տուեր՝ դրսու սամին,
 Քուհաբ տարէք խաղնադարին,
 Հոգեւոր հորուի գետին,
 Փռնաբուն՝ փոշին գլխուն,
 Միջուրս, մուկնի բերան,
 Խնչոր փռն, խնձոր գօտին,
 Խաղն փռն, խարզան թւին,
 Լափառն, ուժնի թւեր,
 Սերն ու պանիր, հոգեւոր,
 Խէնն ու բարին, մանձկալորին,
 Ըռաւէլ, հայ, պաւալէ (*):

* *

Քուրն է ելի աւերներ,
 Գրող տանէ զպաւերներ,
 Քուրն է ելի ջաղցներ,
 Աստուած պահէ զաղջկներ,
 Քուրն է ելի կորդեր,
 Աստուած պահէ շաւիւր (*):
 Կանանց վարոց պղէկներ,
 Կարմիր խնձոր աղջկներ,
 Թաս ու թէփսիք կնկտիք,
 Ուտիք, չուտիք կուրտիք:

* *

Չընգո մընգըռ իմ տապաւորէն,
 Առայ ելայ հայ ու հոգեւ,
 Քուր մը խմի կարմիր կփնէն,
 Պազ մը առայ եարոյ թշնէն,
 Ձէնսի թողի Գօզալ դարէն,
 Խաբար ելաւ անուշ եարէն,
 Ձէնի պիտի թալիմ քարէն,
 Տնէն ելար հէ բէռ.
 Քրդի կըսէն որբէւէրի.
 Կրակ ընկի ջանսի կէրի:

* *

(*) Գուլթանը, բացի սովորական հօ-
 րիքէն (զոյգմը լծեալ եզ) ունի և եօթ
 փռն, ալսինքն եօթ զոյգ լծուած գո-
 մէշներ, և իւրաքանչիւր տունն ունի
 իւր առանձին անտառ:

(**) Խաղաք. քրդ. նշ. երկտասարգ:

Գիշրիկսն ես դուրս ելայ,
 Թուխ ամպ անուշ կը ցօլէր,
 Կը ցօլէր հալուայ սարաւն,
 Չատ բարև հեռուն եարուն,
 Եարուն էր բաղլէն ի քուն,
 Բուրապու բարձր գլխուն,
 Քներ էր քրտներ էր,
 Կզայ թէ պագիկ մ' առնէնք,
 Գլորայ ու զնդան ընկայ,
 Էն զնդան ինչ մեծ զնդան,
 Մէջ վարդ էր բոլոր ուշահան,
 Յուսիսի ս. Սարգիսն էրի.
 Եկաւ ու ցըրձի հանեց:

* *

(Թ ը Ն Ո Ւ Ք - պ ա ռ . ?)

Որ չթռնայ զիտայ պար,
 Ոտներ կոտրի քիտնայ քար.
 Կտրի ընտրա ճար ու վար
 Լէն տունն ու բոլոր էրկէն,
 Խօքօտկներ լմ գէտգէն.
 Սուն ու գերան քա պիտէր,
 Սրտով սիրով եար պիտէր.
 Որ չթռնայ զիտայ քար,
 Ոտներ կոտրի քիտնայ քար:

Սարէն ինչայ եկայ ցած,
 Կզայ վերցի թաժայ հաց,
 Անտրի շուն զիս էխած,
 Ընձի ինչ խածել պիտէր,
 Ընձի գերկ ու ծոց պիտէր.
 Որ չթռնայ զիտայ պար,
 Ոտներ կոտրի քիտնայ քար,
 Ձուն թալի սարեր լորթի, 2)

1) Նայելով խաղալու տեսակին՝ պա-
 րերը ունին հետեւեալ անունները.

1) Թառն (թռնալով պարել) 2) Քօշիքի,
 3) Ձօքօքի 4) Խաղալ չօքօքի 5) Բառն դարձ-
 6) Քէլանդարի 7) Գօքանի 8) Եօթ գօք-
 անի 9) Գլորիքի 10) Ձախ դար իմ ջոհ-
 լաւի 11) Թափառաւորի 12) Լորէ-Մայրի:

2) Լորէ նախ կը նշանակէ առանց

Ձիւն եարն ու քուսն չունի
Եւրոյ չի չի չի չի չի
Ձուլստակ սարեր հովն ընկաւ
Ձուլստակ ջէջան ջովն ընկաւ
Որ չի չի չի չի չի
Ոտներ կոտրի քիտնայ քար:

Գեօ կնկայ գով (պար)

Տօ, գէշ կնիկ, քո հէր հորիմ,
Մաճուն կուզեմ թան կը բերես,
Թիւ մը բորբոս մուկն ի երես,
Գէշ կնիկ կիզէր վերին թաղէն,
Մկներ տապկի լցի թաւէն,
Կուտէն ինքն ու ուր ջանաղէն:

Տօ, գէշ կնիկ, քո հէր հորիմ,
Մաճուն կուզեմ թան կը բերես
Թիւ մը բորբոս մուկն ի երես,
Բիթն էր պոռտուկ¹⁾ կուզէր,
Սէլի քիւ լսգամ կէնէր:

Ոտներ կոտրուկ չի կուզէր
Թիւքի կոտրով ջգմեմ կէնէր:

Գէշ կնկայ քիթ կը փրփրաւ,
... կը մընի ձիւթի ջէջ:

Տօ, գէշ կնիկ, քո հէր հորիմ,
Մաճուն կուզեմ թան կը բերես,
Թիւ մը բորբոս մուկն ի երես:

Գ.

Մ ր ց ց Ե ր ց Ե ր .

Եկան սարով, եկան ձորով,
Եկան երեք կանանց կապով,
Մէկն է Յիսոս, մէկն է Քրիստոս,
Մէկ Ջնգանց (?) Ասուարածին,
Հրեշտակ գէշ դիպաւ բարով,
Դիր կերթաս յառէջ բարով,
— Կերթամ դուռնի հիւնդին,

Հիւսուածքի աչն կաշէ փուլը¹⁾ (դանիշ)
որով լուծը կը կապեն. աչսանդ²⁾ թե-
րւս³⁾ բաշէ, կապի:

¹⁾ Աղած, ծաղած բան որ ճղուի կը-
սեն պոռտել:

Ջինջիլ բերիմ բոլոր պատին,
Իրեք բեւեռ կէր էն խաչին,
Մէկ սիրտ սատանին,
Մէկ բերան գէշ գաղանին,
Մէկ շուռ գալ գիշերին,
Գալ նստի վերեւ բարձին,
Չուր գալ գալոց Քրիստոսին.
Պահապան հրեշտակ, պահապան
կանխ:

Մեր Տէրն եկաւ ամպով խաղաց,
Չորեկոյց աշխարհ դողաց,
Եկաւ նստաւ աթոռ¹⁾ փառաց,
Ձեն տուեց հրեշտակաց,
Եկաւ Պողոս, եկաւ Պետրոս,
Որ երեք բերան գէշ ջիւաց,
Խուր ընկնայ յսուրուրի (?),
Մուր ընկնայ չմասանի,
Աչքնի դժոխք չընկնայ,
Արքայութենին արժան եղնի:

Արագ ճրագ ճշմարիտ,
Ճշմարտաւ (?) մարտիրոս,
Մեր սիրելի Քրիստոս,
Հեծաւ ուր կապուտ²⁾ քուսակ,
Դնաց ի չուրնի քաղաք,
Կոտրեց դուռնի պղնձին,
Քուռն անուշ, երանք ի բարին:

Երնէկ երնէկ գէշ տարին,
Երուսաղէմ շինեցին,
Ջինջիլ բաշէ,
Անուն Յիսոս անուանեցին:
Եղեղեցի ծ³⁾ կալ վերեւ մե,
Հրմալ սիւսակ⁴⁾ քնց եղեղեցի,
Որ երեք բերան գէշ ջիւաց,
Խուր ընկնայ յսուրուրի,
Մուր ընկնայ չմասանի:
Աչքն ի դժոխք չընկնայ,
Արքայութենին արժան եղնի: